

ԵԶՆԻԿԻ ՄԻ ՀԱՏՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ

Եզնիկի մի հատուածի մեկնաբանութեան նկատմամբ, 1924-1928 թուականներին, բանավէճ տեղի ունեցաւ Հրաչեայ Աճառեանի եւ Փրանսիացի հայագէտ՝ Եզնիկի հրատարակիչ եւ թարգմանիչ Լուի Մարիէսի միջեւ: Փափաքելով վերաքննել այդ գիտական հարցը, որին՝ որքան գիտենք՝ ոչ ոք չանդրադարձաւ, ստորեւ վերահրատարակում ենք խնդիր յարուցած էջը (ըստ Լուի Մարիէսի եւ Շարլ Մերսիէի գիտական հրատարակութեան, Patrologia Orientalis, հատ. 28, երրորդ պրակ, Փարիզ, 1959): Նախադասութիւնները համարակալեցինք, ընդգծեցինք բանավէճի նիւթ դարձած բառերը, գիտական հրատարակութեան կցեցինք Զմիւռնիայի (Զ) եւ Վենետիկի 1826ի հրատարակութեան (Վ) տարբերակները, ինչպէս նաեւ առաջարկուած սրբագրութիւնները:

* * *

1. «Եւ արդ ի զուր իսկ ջանան իմաստունքն Յունաց զԱստուծոյ ճառել, այնու՝ զի զարարիչն՝ եւ զարարածս ի միմեանց ոչ կարացին ընտրել՝, որք մթով դիւացն խաւարեալք՝ ի ծնունդս բազումն եւ անթիւ աստուածոց մուծանել դանդաղեցին:

2. Որպէս Եսիողոս՝ ոմն իմաստուն ի նոցանէն՝ բազում ծնունդս աստուածոց համարի՝:

3. Եւ Հոմերոս զրաբանեալ, զնորին զհետ երթեալ, պաճուճեալ բանիւք զնոյնս ճամարտակէ:

4. Եւ այլք բազումք ի փիլիսոփայից՝ առասպելա-

կան բանիւք բանդագուշեալք, խոստանան զԱստուծոյ պատմութիւնս կատարել՝:

5. Որք զԱստուածն ոչ ճանաչեն, եւ ոչ զարարիչն յարարածոց մեկնել գիտեն, զիա՞րդ զԱստուծոյ ճառել մտաբերիցեն:

6. Եւ մանաւանդ որ քան զամենեւին իմաստնագոյն համարին զՊղատոն, որ վասն Աստուծոյ եւ վասն ոգւոց՝ եւ վասն արարածոց՝ խաւսել յաւժարեցաւ:

7. Եւ արդ ընդ նմա իսկ մարտիցուք գոռութեան բանիւք, որ քան զամենայն փիլիսոփայսն աստուածապաշտագոյն երեւի Յունաց՝, զի նորա առաւել գտանի ծանուցեալ՝ զԱստուած, եւ ոչ զարարչութիւնն արարածոց:

8. Զի յորժամ զնորա մեծարոյ՝ կարիսն՝ գճճիացուք, եւ հանցուք զնա յաչաց իւրոցն խաբեցելոց՝, ապա ցուցցուք՝ թե

ով Աստուած է
եւ զինչ նորա արարածք,
եւ մի ինչ,

գոր առաւել անմառ համարի Պղատոն՝, այս է՝ թե միշտ էր Աստուած, եւ արարածս ինչ ոչ ունէր:

9. Զորոյ՝ զկամսն սիրեմ վասն զԱստուածն խընդրելոյ՝ եւ զամբարտաւանութիւնն ոչ գովեմ:

10. Մարկիոն մոլորեալ մուծանէ...»:

(տպ. Զմիւռնիա, 1762, էջ 221-222. Վենետիկ, 1826, էջ 240-241. Փարիզ, 1959, էջ 106):

1. այնու: — 2. զարարիչն՝ ինչ սրբագրուած բ է (*): — 3. ընդրեալ՝ ա-ին վրայ ջնջման նշան: — 4. Եսիողոս՝ ոգ-ն ուրիշ գրչով, տողամիջում: — 5. ԶՎ համարէր: — 6. փիլիսոփայից: — 7. կատարել՝ երկրորդ ա-ն տողամիջում: — 8. ոգոց: — 9. արարածոց՝ առաջին ար-ն սրբագրուած այ է (աստուծոյ): — 10. Վ՝ վեքցակէտ: — 11. Զեռ. ԶՎ չծանուցեալ: — 12. մեծարո: — 13. Զ. Բիւզանդացի (Բառաքնութիւն, 40), Գալէմ. (ՀԱ. 1896, 272), Վարդանեան (Բառ. դիտ. Բ. 53), Նահապետեան (Բազմ. 1908, 264), Արքահամեան (Եզն. աշխ. Թրգմ. ծան. 432) կարծիք: — 14. խաբեցելոց՝ եց-ը տողամիջում: — 15. Վ նոր տողից: — 16. Պղատոն՝ զա տողամիջում: — 17. գորո: — 18. խնդրելո: —

Մարիէսը կարծում էր՝ թէ Աճառեանի կասկածն առաջացել է հատուածի բոլորովին ապակողմնորոշող մեկնաբանութիւնից՝ ազդուած Շմիդ-Գալէմբարեանի դերմաներէն թարգմանութիւնից: Սակայն պէտք է նկատել տանք, որ այդ մեկնաբանութիւնը հիմնուած է այդ թարգմանութեան վրայ: Մարիէսը զարմանում էր նաեւ, թէ Աճառեանը ձեռքի տակ ունենալով նորագիւտ ձեռագիրը՝ չի կարողացել օգտուել նրա տարբերակներից, որոնք, ըստ Մարիէսի «չատ կարեւոր եւ վճռական են այստեղ», եւ հատուածին տուել է այնպիսի մեկնաբանութիւն, որ «Միանգամայն հակառակ է բնագրին եւ ենթադրանքին»⁹: Պիտի դարձեալ նկատել տանք, որ Մարիէսն անտեղի է մեղադրել Աճառեանին: Անտեղի է այդ մեղադրանքը, քանի որ բանավիճային հատուածում՝ 6-9 նախադասութիւններում, ձեռագիրը եւ վեցնետիկեան հրատարակութիւնը տարբերակներ չունեն, եւ Աճառեանն իրաւացիօրէն է ինքնապաշտպանուել (Բագմովէպ, 1926, էջ 170): Մարիէսն է կատարել երկու սրբագրութիւն տուեալ տողերում. 1.- Զեռագրի չծանուցեալ-ը դարձրել է ծանուցեալ, պարզապէս նրա համար՝ որ չ- ժխտականը նորագոյն (°) դրչով աւելացուած է տողամիջում՝ ըստ Աճառեանի տեղեկութեան¹⁰: Այս սրբագրութիւնը անցել է նաեւ գիտական հրատարակութեան մէջ (տե՛ս վերեւում): Մեզ թւում է, որ Մարիէսը սրբագրութեան բաւարար հիմք չունէր: Մենք դեռ կ'անդրադառնանք սրան: 2.- Մարիէսը ճորդ նախադասութեան Պապտոնը կարդացել է գՊապտոն, անուշադրութեամբ ճիշտ չհասկանալով Աճառեանի տեղեկութիւնը՝ թէ դ-ն տողամիջում է¹¹: Մարիէսը նոյնիսկ առաջարկել էր այդ յատուկ անունը կարդալ Մարկիոն. «Ես ուղղակի կը կարդայի Մարկիոն եւ կ'ենթադրէի՝ թէ Մարկիոնը կամայականօրէն դարձրել են Պապտոն եւ սա էլ ապա գՊապտոն»¹²: Աճառեանի քննադատութիւնից յետոյ նա հրաժարուեց իր առաջարկից¹³: Սակայն պնդեց՝ թէ այդ հատուածում Եղնիկը նրկատի ունի Մարկիոնին: Ստորեւ կը տեսնենք, որ նա այս պնդումը 1928ին մեղմացրեց «անուղղակիօրէն» բառով:

Այսպէս՝ վիճելի հատուածի ճիշտ մեկնաբանութեան համար Աճառեանը նորագիւտ ձեռագրից ոչ մի սպասելիք չունէր:

Խնդրի շարադրանքից յետոյ մեզ մնում է քննարկել 6-9 նախադասութիւնները եւ թարգմանութիւնները, որ Մարիէսն առաջարկել է 1924ին, 1928ին եւ վերջնական թարգմանութեան մէջ: Աճառեանը չի թարգմանել հատուածը:

9. De Deo, էջ 148:

10. Քննութիւն եւ համեմատութիւն, էջ 80:

11. Անդ, էջ 80:

12. De Deo, էջ 149, ծան. 7:

13. A propos d'Eznik, p. 241 (R. E. Arm., t. VI 1926, 177).

* * *

Մարիէսն իրաւամբ կարծում էր, թէ «Բաւական է ձեռագրի բնագիրը ճիշտ թարգմանել, որպէսզի թերիութեան նշոյլն անգամ փարատուի, եւ մի անգամ եւս նկատուի՝ որ հետեւողականութիւն կայ Եղնիկի մտքերի միջեւ»¹⁴: Եւ նա մեկնողական ծանօթագրութիւններով թարգմանել է 5-9 նախադասութիւնները: Այս առաջին թարգմանութիւնը բաւականին տարբերում է վերջնականից: Նա այն բանը կատարեց նախ 1928ին, սակայն միշտ մնալով այն համոզման մէջ, թէ Աճառեանի ակնարկած թերիից զերծ է ձեռագիրը:

5-9 նախադասութիւնները քննարկենք առանձին-առանձին:

5ՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Որք գլխատուածն ոչ մասնաչեմ, եւ ոչ գարարիչն յարարածոց մեկնել գիտեմ, գիա՞րդ գլխատուծոյ մատել մտարբիցեմ:

Մենք համաձայն ենք Մարիէսի թարգմանութեան (տե՛ս նրա Եւ Մերսիէի թարգմանութեան հրատարակութիւնը): Սակայն նախընտրելի էր, որ բնագրի հրատարակութեան մէջ այս նախադասութիւնը միացուէր յաջորդին, քանի որ մտարբիցեմ բայը նրա էլ ստորոգեալն է, սակայն եզակի թուով:

6ՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Եւ մամաւամդ որ քամ գամեմեսիմն իմաստմագոյն համարիմ ըգ-Պապտոն...

Թարգմանիչները տարբեր իմաստներով են հասկացել այս նախադասութիւնը: Մարիէսն առաջին աշխատութեան մէջ թարգմանել է այսպէս. «Et surtout celui-là qui est estimé plus pieux que tous, (plus pieux) que Platon» (De Deo, 148-149) [«Եւ մանաւանդ նա, որ համարում է ամենից աստուածապաշտը, (աւելի աստուածապաշտ) քան Պապտոնը»]: Ըստ նրա, մա-ն Մարկիոնն է. «Գլխաւոր անձը, որի անունը դեռ տրուած չէ, եւ որին համեմատում են Պապտոնի հետ, Մարկիոնն է» (նոյն տեղում, էջ 149, ծան. 2): Համարիմ բայը համարել է կրաւորական եզակի երրորդ դէմք, նրա -մ վերջաւորութիւնը՝ յօդ. «Եթէ համարի-մ կարդանք, այսինքն՝ եզ. Յրդ դէմք (մ = նա), ինչպէս Շմիդն ու Գալէմբարեանը, որ բառն այդ դէպքում ուղղական է. եւ ես այս թարգմանութիւնն եմ նախընտրում համարի ընթերցուածի պատճառով, որ շատ յստակ է, տող 22 (1826ի հրատ., Մ. Մ.). ինձ թւում է, որ կարելի է թարգմանել նաեւ 'նա,

14. De Deo, 148.

որին համարում են՝. այս դէպքում որ-ը հայցական է, համարինը հասարակ սեռի յոգն. Յրդ դէմք: Իմաստը նոյնն է մնում» (նոյն տեղում, էջ 149, ծան. 1): Բնագրի իմաստնազոյն համեմատականը նա թարգմանել է «ամենից աստուածապաշտը» որ անուշադրութեան հետեւանք է, բայց ուղղել է երկրորդ աշխատութեան մէջ 1928ին, երբ վերաքննում է ամբողջ նախադասութեան թարգմանութիւնը:

Մարիէսի առաջին թարգմանութեան մասին Ադոնցը գրել է. «Մարիէսն եւս փորձում է իր ոյժերը եւ պէտք է խոստովանել, որ բաւականին չարչարում է հայոց լեզուն: Սակայն լեզուական բռնութիւնները մեղմանում են նրանով, որ ընդհանրապէս ճիշտ է մեկնում բնագրի իմաստը» (Բազմավէպ, 1926, Ապրիլ, էջ 112): Ինքը Ադոնցը «Մանաւանդ որ քան զամենեսինն իմաստնագոյն համարին զՊղատոնն» նախադասութիւնը թարգմանել է այսպէս. «Մանաւանդ նա, որ համարում է Պղատոնին ամենից իմաստուն», եւ մեկնաբանել է այսպէս. «Այսինքն՝ նա, որի աչքում ամենամեծ հեղինակութիւնը Պղատոնն է: Հետեւապէս՝ որ ... համարին՝ պէտք է կարդալ՝ որ համարէ-ն» . այսինքն՝ ոչ թէ որը համարում է, այլ որը համարում է: Մնացած մասը բնագրի թողնելու է, ինչպէս կայ: Ակնարկը վերաբերում է Մարկիոնին» (նոյն տեղում, էջ 112): 1924ին քանի որ Մարիէսն էլ կարծում էր, թէ «ակնարկը վերաբերում է Մարկիոնին» եւ թէ համարին բայի ն տառը յօդ է (1924ի աշխատթ., էջ 149, ծան. 1 եւ 2), ուստի Ադոնցը գրում էր, թէ Մարիէսն «ընդհանրապէս ճիշտ է մեկնում բնագրի իմաստը»: 1928ին Մարիէսը բնագրի «Եւ մանաւանդ որ քան զամենեսինն իմաստնագոյն համարին զՊղատոնն» նախադասութիւնը թարգմանելով «Եւ մանաւանդ նրանք (...), որոնք բոլոր փիլիսոփաներից բարձր են դասում Պղատոնին» եւ համեմատելով Ադոնցի թարգմանութեան հետ՝ գրել է. «Նախադասութեան այս հաստատածի մեր այսօր առաջարկած մեկնաբանութիւնը մօտենում է ուսուցչապետ Ադոնցի մեկնաբանութեան, սակայն այն տարբերութեամբ, որ առաջին քրը համարում ենք յոգնակի ուղղական եւ անփոփոխ ենք պահում բնագրի համարինը (էջ 7): Իրօք մեծ տարբերութիւն չունեն Մարիէսի «նքանք, որոնք համարում են Պղատոնին» եւ Ադոնցի «նա, որ համարում է Պղատոնին» բառերը: Սակայն ենթական կամ համարողը Ադոնցի համար մնում է Մարկիոնը, իսկ Մարիէսի համար՝ նրանք. սա գրել է. «Ամէն հիմք կայ կարծելու, թէ այդ նախադասութեան մէջ Եզնիկը դեռեւս նկատի չունի Մարկիոնին, ինչպէս ենթադրում էի 1924ին, այլ՝ նոր-պղատոնական փիլիսոփաների կամ հերետիկոսների բազմազան խումբը, որոնք Աստուծոյ մասին իրենց տեսութիւնների մէջ իւրովի վկայակոչում էին Պղատոնին» (էջ 7): Մենք համաձայն չենք Մարիէսի եւ Ադոնցի թարգմանութիւններին:

Հ. Եղիա Փէչիկեանը անդրադառնալով Մարիէսի առաջին եւ Ադոնցի թարգմանութեան, գրել է. «Ըստ իս, առանց բռնադրօսումի, պարզ եւ մեկին կը թուի իմաստը. 'Որ քան զամենեսինն իմաստնագոյն համարին զՊղատոնն' = Անոնք որ ամենէն աւելի իմաստուն կը համարին Պղատոնը: Ադոնց ալ այս վերջին ընթերցման եւ մեկնութեան կը յանդի, միայն եղակի ձեւով. 'Նա, որ համարում է Պղատոնին'. ասկէ կը ստիպուի ինքն ալ բնագիրը բռնաբարել» (Բազմավէպ, 1929, սեպտեմբեր, 267): Հ. Փէչիկեանը իրաւացի է:

Մարիէսի առաջին թարգմանութիւնը պատմական արժէք միայն ունի, քանի որ այն վերափոխուել է. երկրորդն անցել է վերջնական թարգմանութեան մէջ՝ խմբագրական մի փոքրիկ տարբերութեամբ, որ աննշան է իմաստի համար: Յամենայն դէպս, 1924ի համեմատութեամբ՝ նա փոքր ինչ նահանջել է 1928ին. դա այն է, որ 6րդ նախադասութիւնից սկսած Եզնիկը նկատի չունի Մարկիոնին: Մենք դեռ կ'անդրադառնանք այս նախադասութեան թարգմանութեան:

Ա. Ա. Աբրահամեանը Եզնիկի աշխարհաբար թարգմանութեան մէջ (Երեւան, 1970, էջ 151 եւ ծան. 429) ընդունել է Ադոնցի մեկնաբանութիւնը՝ «Եւ մանաւանդ նա, ով բոլորից իմաստուն է համարում Պղատոնին». ծանօթագրութեան մէջ՝ «Այս նախադասութեան համապատասխան մեկնաբանութիւնը տուել է Ն. Ադոնցը (տե՛ս «Բազմավէպ», 1926, էջ 112): Միայն պէտք է յիշել, որ բնագրի համարին բանաձեւը, որպէս հասարակ բայ, յիշեալ նախադասութեան մէջ դործածուած է ներդործական սեռի նշանակութեամբ: Եզակի թուով է, ն-ն յօդ է («Համարի-ն»): Ադոնցի եւ այս մեկնաբանութիւնը «բըռնաբարիչ» է, որովհետեւ չի համապատասխանում դասական դրաբարի քերականութեան: Յօդը բայի վրայ է դրւում՝ երբ այն անմիջապէս յաջորդում է յարաբերական մի բառի (բազմաթիւ օրինակներով տե՛ս Գերալանու-թիւն հայկագնեան լեզուի, 1885, էջ 297-304): Ենդումներ երբեմն լինում են, «Երբ յարաբերականին յաջորդող բառը պէտք եղած դէմքի յօդը չի կրնար առնուլ» կամ «Երբեմն լոկ զարտուղութեամբ կը գտնուի յօդը յարաբերական բառէն հեռացած, ինչպէս՝ Որ ոչ երթաս դհետ» (նոյն տեղում, էջ 303), փոխ. «Որ ոչք երթաս դհետ»: Սակայն կարծում ենք, որ Եզնիկի նախադասութիւնը չի մտնում այդ կանոնի եւ բացառութեան տակ՝ տրուած օրինակների մէջ: Ահաւասիկ մեր մեկնաբանութիւնը:

Յօդուածի սկզբում վերահրատարակուած հատուածից առաջ Եզնիկը գրել է՝ թէ միայն Աստուծոյ բարեկամներն են արժանի նրա մասին խօսելու. «Այլ ըստ Աստուծոյ արժանեաց ոչ ոք արժանաւոր իցէ պատմիչ լինել, բայց միայն եթէ Աստուծոյ բարեկամք, որք վասն նորա սիրոյն եւ զկեանս աշխարհիս արհամարհեցին» եւ այլն

(Վենետիկ, էջ 239-240. Փարիզ, 1959, պարբ. 355): Ուստի ի զուր են փորձում յոյն իմաստունները կամ փիլիսոփաները ճառել Աստուծոյ մասին. «Եւ արդ ի զուր իսկ ջանան իմաստունքն Յուլիանոս ծոյ ճառել, այնու զի զարարիչն եւ զարարածս ի միմեանց ոչ կարացին ընտրել, որք մթով դիւացն խաւարեալք՝ ծնունդս բազումս եւ անթիւ աստուածոց մուծանել դանդաչեցին» (նոյն Հրատարակութիւններէ էջ 240 եւ պարբ. 356, տե՛ս Հաստուածը վերելում): Եղնիկն իբրեւ օրինակ նշում է անմիջապէս «Որպէս Եսիողոս ոմն իմաստուն ի նոցանէն», «Եւ Հոմերոս զրաբանեալ, զնորին հետ երթեալ», եւ աւելացնում՝ «Եւ այլք բազումք ի փիլիսոփայից առասպելական բանիւք բանդադուշեալք, խոստանան զԱստուծոյ պատմութիւնս կատարել»: Թուարկուած բոլորին նկատի առնելով՝ Եղնիկը բացառանշել է. «Որք զԱստուածն ոչ ճանաչեն, եւ ոչ զարարիչն յարարածոց մեկնել գիտեն, զիսորք զԱստուծոյ ճառել մտաբերեցեն», որին յաջորդում է անմիջապէս բանավէճի նախադասութիւնը՝ «Եւ մամաւանդ որ քան զամենեսինն իմաստագոյն համարին զՊապան»: Մեզ թըւում է, որ մամաւանդը Պապանին ընդգծելու համար է. Թարգմանում ենք՝ «Եւ մանաւանդ նա (ի՞նչպէս է մտաբերում Աստուծոյ մասին ճառել՝ զիսորք զԱստուծոյ անտել մտաբերիցէ), որին ամենից իմաստունն են համարում՝ Պապանը...»: Վերելում ասում էինք, որ Երդ նախադասութեան մտաբերիցեն բայը վերաբերում է նաեւ Երդ նախադասութեան: Կարելի է Թարգմանել նաեւ. «Եւ մանաւանդ Պապանը, որին ամենից իմաստունն են համարում, (ի՞նչպէս է մտաբերում Աստուծոյ մասին ճառել)»: Իմաստը չի փոխւում: Այս Թարգմանութիւնը ի՞նչպէս է հնարաւոր՝ քերականութեան տեսակէտից:

Քերականութիւն հայկազմեան լեզուի գրքի հեղինակները (Վ. Զաւրխեան եւ Ա. Այտընեան) գրել են. «Երբեմն դարձուածով մը՝ յարաբերական իւր յարաբերեալէն յառաջ կ'անցնի... Այս օրինակով յարաբերական երբեմն իւր յարաբերելոյն հետ հոլովը կը փոխէ. այսինքն՝ յարաբերականը յարաբերելոյն հոլովը կ'առնու եւ յարաբերեալը յարաբերականին. Զորս վասն Կոնոսի եւ Արամազդայ պատմութիւնից են՝ աղաչեմ ասել» (էջ 346 կանոն ԺԸ եւ 347 կանոն ԺԹ): Կարծում ենք, որ «Եւ մանաւանդ որ քան զամենեսինն իմաստագոյն համարին զՊապան» նախադասութեան մէջ կատարուել է նշուած տեղափոխութիւնը՝ որ յարաբերականի եւ նրա (զ)Պապան յարաբերեալի միջեւ: Երդ նախադասութիւնը կապելով Երդին՝ կը կարդանք. «... եւ մանաւանդ Պապան, զոր քան զամենեսինն իմաստագոյն համարին, որ...» («ի՞նչպէս է մտաբերում ճառել Աստուծոյ մասին»), եւ մանաւանդ Պապանը, որին ամենից իմաստունն են համարում, որը...»: Պապան յարաբերեալը դրեցինք իր տեղում

յարաբերականից առաջ եւ նրան տուեցինք իր ուղղական հոլովը, որ առել էր յարաբերականը, բացի տեղափոխութիւնից:

Հնարաւոր է նաեւ հետեւեալ մեկնաբանութիւնը. «Եւ մանաւանդ այն, զոր քան զամենեսինն իմաստագոյն համարին, Պապան, որ...», «զՊապան»-ի զ-ն տալով իր յարաբերականին եւ Պապանը-ը թողնենք իր տեղում՝ յարաբերականից յետոյ: Կամ քանի որ վերականգնել ենք այն յարաբերեալը (գիտենք որ յարաբերականն առանձին հաւասար է այն յարաբերեալին եւ յարաբերականին), ուստի Պապան ուղղականը կարող ենք համարել այն իմաստագուրկ (բոլոր դեռանուններն իմաստագուրկ են) դերանունի իմաստալից բացայայտիչը: Եւ կամ՝ «Եւ մանաւանդ որ (= զոր. գիտենք, որ կան դէպքեր, երբ այսպէս է) քան զամենեսինն իմաստագոյն համարին՝ զՊապան, որ...», այսինքն՝ զՊապան հայցականը բացայայտիչ համարել որ (= զոր) ուղիղ խնդրին (համարին բայի, որ այստեղ ներդրածական սեռի իմաստ ունի): ԶՊապան գոյականի հայցական դերուելը բացատրւում է ոչ միայն որ (= զոր) հայցականի բացայայտիչը, այլեւ համարին ներդրածական սեռի բային անմիջապէս կից դրուած լինելով:

Այսպէս, հակառակ Մարիէսի, որ Երդ նախադասութեան սկզբի որ յարաբերականի մէջ տեսնում էր «նրանք որոնք»՝ խայտաբղէտ փիլիսոփաներ, ի տարբերութիւն Ադոնցի, որի համար որ յարաբերականով ակնարկւում է Մարիէսին, մենք կարծում ենք, որ այն վերաբերում է Պապանին, ինչպէս նաեւ յաջորդ 7-8-9 նախադասութիւնների դերանունները: Այժմ քննարկենք սրանք առանձին-առանձին.

7ՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Եւ արդ ընդ նմա իսկ մարտիցուք գոռութեան բանիւք, որ քան զամենայն փիլիսոփայսն աստուածապաշտագոյն երեւի Յուլիանոս, զի նորա առաւել գտանի [ծանուցեալ] զԱստուած, եւ ոչ զարարչութիւնն արարածոց:

Այստեղ հարցն այն է, թէ հեղինակը ո՛ւմ մասին է խօսում այս տողերում՝ Պապանի՞ թէ Մարիէսի: Այս երկուսից ո՞րն է ներկայացուած մեւ, որ եւ նորա դերանունների մէջ: Աճառեանի համար Պապանն է, Մարիէսի համար՝ Մարիէսը: Ուստի նախադասութեան ճիշտ մեկնաբանութիւնը շատ կարեւոր է խնդրի լուծման համար:

Մարիէսին տուած պատասխանում Աճառեանը գրել է. «Եւ Եղնիկի յիշեալ հաստուածը իմ եւ Մարիէսի բացատրութիւններով հանդերձ ցոյց տուի անձամբ Աբեղեանին, Մանանդեանին, Հ. Ակինեանին, Շահաղիգին, Խաչատրեանին եւ Աւդալբեղեանին, որոնք մեր

լաւագոյն հայագէտներն են Երեւանի մէջ, եւ բոլորն ալ հասկցան այնպէս՝ ինչպէս ես եմ հասկցած: Հետեւաբար հիմա ալ կը պնդեմ (ինչպէս 1904ին, Մ. Մ.), որ Եղնիկը գրած է ամբողջ գիրք մը Պղատոնի դէմ, որմէ կը մնան միայն վերջին վեց տողերը» (Բազմավէպ, 1926, յունիս, էջ 171):

Ըստ Ադոնցի, հէնց «Եւ մանաւանդ որ քան զամենեսինն իմաստնադոյն համարին զՊղատոն» ճորդ նախադասութեան մէջ արդէն «Ակնարկը վերաբերում է Մարկիոնին. հեղինակը առաջիկայ հերքման, առարկութեան ոյժ տալու համար, հէնց սկզբից յայտարարում է, որ յանդիմանելի վարդապետութեան, այն է Մարկիոնականութեան աղբիւրը Պղատոնն է, որը չնայելով որ փիլիսոփաներից ամէնէն աստուածապաշտն է, բայց էլի տկարամիտ է» (Բազմավէպ, 1926, ապրիլ, էջ 112–113): Սակայն նկատենք, որ սա Ադոնցի մեկնաբանութիւնն է միայն, որովհետեւ Եղնիկը չի յայտարարում առանձնապէս՝ թէ հերքուելիք ուսմունքը մարկիոնականութիւնն է եւ թէ սրա աղբիւրը Պղատոնն է: Ի միջի այլոց, Մարկիոնի հերձուածը հերքելիս՝ Եղնիկը ոչ մի ակնարկութիւն չի անում նրա պղատոնեան աղբիւրի մասին:

Մարիէսը 1928ի իր աշխատութեան մէջ, պատասխանելով Աճառեանին (1926), գրել է. «Ես շարունակում եմ պնդել, որ այդ (այսինքն՝ 241. Մ. Մ.) էջում խօսքն ուղղակիօրէն Մարկիոնի մասին է, իսկ Պղատոնի մասին՝ անուղղակիօրէն միայն» (էջ 2): Էջ 8ում՝ «Սկսած Եւ ընդ նմա եւ այլն բառերից մինչեւ էջի վերջը՝ Եղնիկն ուղղակի նկատի ունի Մարկիոնին, որի ուսմունքը յատկօրէն արտայայտուած է հետեւեալ կարճ նախադասութեան մէջ, որ պէտք է կարդալ ձեռագրի բնագրով՝ Զի նորա առաւել գտանի ծանուցեալ զԱստուած, եւ ոչ զարարչութիւնն արարածոց»: Նա ասում է «ձեռագրի բնագրով», որովհետեւ ձեռագրում ծանուցեալ բառի առջեւ նորագոյն (°) գրչով է դրուած չ ժխտական մասնիկը. ուստի Մարիէսն այն չի ընդունել:

Մենք համաձայն չենք Մարիէսին: Մեր կարծիքով, 7րդ նախադասութեան եւ նրա դերանունների մէջ Եղնիկը նկատի է ունեցել Պղատոնին եւ ոչ թէ Մարկիոնին, որի անունը յիշատակուելու է 12 տող յետոյ՝ 10րդ նախադասութեան սկզբում: Մեր կարծիքը հաստատելու համար ունենք քերականական եւ ենթաբնագրային կամ իմաստային փաստեր:

Նախ՝ քերականական փաստի մասին:

Վերցնենք նախ 7րդ նախադասութեան «Եւ արդ ընդ նմա իսկ մարտիցուք գոռութեան քանիւք, որ» հատուածը. ունենք նմա (նա) նախադաս յարաբերեալը եւ որ յարաբերականը: Արդ՝ քերականու-

թիւնը սովորեցնում է հետեւեալը. «Այն եւ նա դերանունաց վրայ՝ երբ յարաբերեալ են՝ հետեւեալ ընդհանուր կանոնը միտք առնելու է. երբ յարաբերեալն որ յարաբերականէն յառաջ է՝ այն կը գործածուի, (եթէ նաեւ մարդ է). իսկ եթէ ետքն է, (եթէ երկրորդ նախադասութեան մէջն է), նա կամ նոյն կը դրուի» (Քերականութիւն հայկագնեան լեզուի, 1885, էջ 340–341): Ուստի սպասելի էր, որ այստեղ նմա-ի, այսինքն՝ նա-ի փոխարէն այնքա գործածուած լինէր, այսինքն՝ այն, քանի որ այս յարաբերեալը նախադաս է: Սրա պատճառը կամ պատասխանը դարձեալ տրուած է նոյն քերականութեան մէջ. «Այն որ ընդհանուր է. իսկ նա որ, սա որ՝ որոշեալ կամ արդէն յիշուած մէկը կ'իմացնէ (նոյն էջում): Այդ «արդէն յիշուածը» այս-յիշուած մէկը կ'իմացնէ (նոյն էջում): Այդ «արդէն յիշուած», «Եւ մատեղ զՊղատոնն է՝ նախորդ նախադասութեան մէջ յիշուած, «Եւ մատեղ զՊղատոնն է՝ նախորդ նախադասութեան համարին զՊղատոն, նաւանդ որ քան զամենեսինն իմաստնադոյն համարին զՊղատոն, որ...» (6րդ նախադասութիւն): Եղնիկն իր ամբողջ երկում միայն 9 անգամ է գործածել նա... որ, բոլորն էլ քերականութեան սահմանած պայմաններում:

Կարծում ենք, որ իմաստային տեսակէտից էլ նմա դերանունը դրուած է Պղատոնի անունն փոխարէն¹⁵, որովհետեւ «որ քան զամենայն փիլիսոփայն աստուածապաշտադոյն երեւի Յունաց, զի նորա առաւել գտանի (չ)ծանուցեալ զԱստուած, եւ ոչ զարարչութիւնն արարածոց» բառերը աւելի շատ նրան են յարմար, քան Մարկիոնին: Ինչո՞ւ:

Նախ՝ սկզբից եւեթ Եղնիկի խօսքը նախաքրիստոնէական շրջանի Յունաց իմաստունների մասին է (տե՛ս հատուածը վերեւում), որոնցից է ոչ թէ Մարկիոնը, այլ Պղատոնը, որի անունը Եղնիկը նշում է Եսիդոսի, Հոմերիոսի անուններից եւ «Այլ բազումք ի փիլիսոփայից» յետոյ, որպէս Աստուծոյ գաղափարին ամէնից շատ մօտեցածի, ամէնից աստուածապաշտի, որ խոստացել է խօսել Աստուծոյ, հոգիների եւ արարածների մասին: Իսկ Մարկիոն քրիստոնեան, թէեւ հերետիկոս, որ ապրել է երկրորդ դարում, Պղատոնի չափ ազդեցութիւն չի թողել Յոյների վրայ, բոլոր փիլիսոփաներից «աստուածապաշտադոյն» չի երեւացել նրանց: Ճիշտ է նկատել դարձեալ. Հ. Եղիա Փէշիկեանը. «Կարելի չէ ժխտել, որ հոն խօսքը հեթանոս հին եղիա Փէշիկեանը. «Կարելի չէ ժխտել, որ հոն խօսքը հեթանոս հին Յոյներու մասին է, ինչպէս (էջ 240. 9)՝ «Եւ արդ ի զուր իսկ ջանան իմաստունքն Յունաց զԱստուծոյ ճառել... որպէս Եսիդոս... եւ Հոմերոս», որոնց կրնայ շատ լաւ յաջորդել Պղատոն, բայց ոչ

15. 1959ի հրատ. 51. 20, 61. 9, 61. 11, 70. 7, 73. 2, 81. 16, 106. 15, 113. 6, 117. 26. Այս կարծիքին է եղել, մեզնից առաջ, Նաեւ Հ. Գ. Նահապետեանը. «Եւ արդ ընդ նմա իսկ (Պղատոնի՝ որ իմաստնադոյնն է փիլիսոփաներէն) մարտիցուք գոռութեան քանիւք» (Բազմավէպ, 1908, էջ 285):

բնաւ Մարկիոն, քանի որ անով ահագին ուսում մը հարկ պիտի ըլլար՝ անցնելով երեւելի դէմքերէ, ինչպէս նոյն ինքն Պղատոն, Արիստոթել եւ որ ըստ կարգի, մինչեւ որ քրիստոնէութեան Բ. դարն հասնէր եւ հոն ալ պիտի կարենար, եթէ ոչ Մարկիոնէն ցայտուն, բայց դէթ մերձաւոր գնաստիկեաններու պարագլուխներու հանդէպի՝ անոնց պոչ կազմող ամբաւ նախիրներու հետ» (Բազմավէպ, 1929, սեպ., էջ 266)։

Եղնիկի «... որ քան զամենայն փիլիսոփայոյն աստուածապաշտադոյն երեւի Յունաց» բառերը (Շրջ նախադասութիւն) աւելի են պատշաճում Պղատոնին քան Մարկիոնին։ Արդարեւ, ըստ Եղնիկի, Պիւթագորեանների, Պերիպատիկեանների, Ստոյիկեանների եւ Եպիկուրեանների համեմատութեամբ Պղատոնն ու Պղատոնականները միակն են՝ որոնք ընդունել կամ ենթադրել են մի շարժիչ ոյժ-Աստուծոյ գոյութիւնը (հմտ. Եղնիկ, պարբ. 294-297)։ այս նկատառումով կարելի է վերընթերցել Պղատոնի Տիմէոսի մէջ աշխարհի կազմաւորման մասին՝ Աստուծոյ կամ աստուածների կողմից։ Ուստի, Յոյների աչքում ոչ թէ Մարկիոնը, այլ Պղատոնը գերազանցած կը լինէր փիլիսոփաներին իր «աստուածապաշտութեամբ»։ Նա Յոյների մօտ չի վայելել նոյն յարգանքը՝ ինչ Պղատոնը։ Ա. Հառնակը նրան իրաւացիօրէն համարել է եկեղեցու վերափոխիչ եւ ոչ թէ նոր ուսմունք ստեղծելու հետամուտ վարդապետ։

Շրջ նախադասութեան վերջաւորութիւնն էլ, ձեռագրի բնագրով, աւելի է պատշաճում Պղատոնին քան Մարկիոնին. «... զի նորա առաւել դտանի չծանուցեալ զԱստուած եւ ոչ զարարչութիւնն արարածոց»։ Քանի որ Մարիէսը ձեռագրի չծանուցեալը դարձրել է ծանուցեալ, ուստի թարգմանել է. «... որովհետեւ երեւում է, որ նա Աստուծոյ մասին աւելի համապատասխան գաղափար է ունեցել եւ ժխտել է արարածների ստեղծագործութիւնը (Աստուծոյ կողմից)»։ Ձեռագրի համաձայն՝ մենք թարգմանում ենք. «... որովհետեւ երեւում է, որ նա (աւելի քան միւս փիլիսոփաները) ոչ ճանաչել է Աստուծուն եւ ոչ էլ արարածների ստեղծագործութիւնը»։ Մարիէսը «գաղափար է ունեցել» հաստատականով թարգմանել, որովհետեւ ձեռագրի չծանուցեալ գերբայի քիստական մասնիկը ջնջել է պարզապէս նրա համար, որ ձեռագրում տողամիջում է եւ թւում է՝ թէ երկրորդ ձեռքից է աւելացուել։ Կարծում ենք որ դա բաւական հիմք չէր, որովհետեւ ուրիշ տեղերում նա ընդունել է այդպիսի սրբագրութիւններ առանց պատճառաբանութեան (տե՛ս վերելում բնագրի նրա հրատարակութեան 4, 7, 14, 16 տարընթերցութեան)։ Հաւանաբար, նրա սրբագրութեան բուն պատճառը նրա համոզումն է՝ թէ Շրջ նախադասութիւնը (եւ շարունակութիւնը, ինչպէս կը տեսնենք) վերաբերում են Մարկիոնին։ Արդ, սա իբրեւ քրիստոնեայ (ըստ Եգ-

նիկի՝ նա եպիսկոպոսի որդի էր, պարբ. 432), Աստուծոյ մասին պէտք է «աւելի համապատասխան» գաղափար ունենար քան Պղատոնը. որով Մարիէսը չծանուցեալը դարձրել է ծանուցեալ։ Միւս կողմից, մտածում էր անշուշտ Մարիէսը, թէ Մարկիոնը, իբրեւ հերձուածող, ժխտել է արարածների ստեղծագործութիւնն Աստուծոյ կողմից։ Նկատենք առնուազն երկու բան։

Բնագրում չկայ «ժխտել է» բայի համապատասխանը, որով Մարիէսը թարգմանել է «ոչ» ժխտականը՝ «... եւ ոչ զարարչութիւնն արարածոց»։ Առանց սրբագրելու ձեռագիրը, եւ Շրջ նախադասութիւնը Պղատոնի մասին ասուած համարելով՝ մենք բառապաշարի եւ կառուցման համապատասխանութիւն ենք տեսնում մի կողմից՝ «նորա առաւել դտանի չծանուցեալ զԱստուած եւ ոչ զարարչութիւնն արարածոց» նախադասութեան եւ «Որք զԱստուածն ոչ ճանաչեմ եւ ոչ զարարիչն յարարածոց մեկնել զիտեն...» հատուածի միջեւ (Տրդ նախադասութ.)։ Ըստ Եղնիկի, հէնց Պղատոնը պատկանում է այն փիլիսոփաների թուին, որոնք ոչ Աստուծուն ճանաչեցին եւ ոչ էլ ընդունեցին արարածների ստեղծագործութիւնը Աստուծոյ կողմից։ Նկատենք երկու նախադասութիւնների ժխտական բնոյթը, որով ենթադրում ենք, որ Շրջ նախադասութեան չծանուցեալ գերբայի չմասնիկը իր տեղում պէտք է մնայ։

Մեր կարծիքով ճիշտ չէր լինի նաեւ ենթադրել, թէ Մարկիոնն աւելի ճիշտ կամ աւելի համապատասխան գաղափար է ունեցել Աստուծոյ մասին, քան Պղատոնը, բայց ժխտել է արարածների աստուածային արարչագործութիւնը։ Ըստ Եղնիկի, նա ընդունում էր օրինաց Աստուածը կամ արդար Աստուածը, եւ օտար Աստուածը, (նիւթը), մի կողմ թողնելով նրա դաւանաբանական փոփոխութիւնները մանրամասնութիւնները, որոնց ամբողջութիւնը Եկեղեցին հերձուած է համարել իրաւամբ։ Նա ինչո՞ւ է Պղատոնից աւելի լաւ։ Ա՞յդ է Աստուծոյ մասին «աւելի համապատասխան» գաղափարը։ Ըստ Եկեղեցու վարդապետութեան, Մարկիոնն իսկապէս ոչ Աստուծուն է ճանաչել եւ ոչ արարչագործութիւնը։ Ոչ էլ Պղատոնը, որքան էլ ամենից «աստուածապաշտը» երեւէր։ Ճիշտ է, որ նա խօսել է Աստուծոյ, հոգիների եւ արարածների մասին (տե՛ս նախադասութիւն 6)։ Բայց ըստ նրա Տիմէոսի, Աստուած ոչ թէ ստեղծել է աշխարհը, այլ միայն կազմել է կամ ձեւաւորել։ Նա գրել է. «Արդարեւ, Աստուած կամենալով, որ ամէն ինչ լաւ լինի եւ ոչ մի վարդի եւ կանոնի, եւ անկանոնութիւնից այն վերածեց կանոնաւորութեան, ենթադրելով, որ կանոնաւորութիւնը ամէն տեսակէտից նախընտրելի է» (Ֆրանսերէն թարգմանութիւնից, Տիմէոս 29e-31b,

թիւներ), ապա ինձ թւում է, որ որոշ (գործ) յարաբերականը անպայման Պղատունին չի վերաբերում, որի հեղինակութիւնը միայն պատահաբար է այստեղ վկայակոչուել, այլ՝ որոշ իրօք յղում է Զի նորա առաւել... տողի նորային եւ Եւ արդ ընդ նմա... տողի նման, այսինքն՝ Մարկիտին: Ոչ միայն մտածողութեան ընդհանուր ընթացքը, որ ընդլայնում է Եւ արդ ընդ նմա... տողից սկսած, այդ է թելադրում, այլեւ այն, ինչ Եզնիկն ասում է այն անձի մասին, որին յղում է այս որոշ յարաբերականի միջոցով: Արդարեւ Եզնիկն այդ մարդու մասին ասում է. «(Ես՝ Եզնիկս) զկամսն սիրեմ վասն զԱստուածն խնդրելոյ, եւ զամբարտաւանութիւնն ոչ գովեմ» (ըստ բնագրի. Մ. Մ.): Արդ «Աստուած որոնողի» եւ «ամբարտաւանութեան» այս երկու յատկանիշները շատ լաւ են յարմարում Մարկիտինին» (1928ի աշխատ., էջ 102):

«Զի յորժամ զնորա... արարածս ինչ ոչ ունէր» բառերը մի նախադասութիւն համարենք կամ ոչ, մենք համոզուած ենք, հակառակ Մարիէսի, որ (գ)որոշ յարաբերականը, ինչպէս եւ դրան նախորդող (զ)նորա եւ (զ)նա դերանունները յղում են Պղատունին: Ուստի, Եզնիկը Պղատունին է նկատի ունեցել, երբ գրել է «Զորոյ զկամսն սիրեմ վասն զԱստուածն խնդրելոյ, եւ զամբարտաւանութիւնն ոչ գովեմ»:

Մարիէսը կարծում է, թէ «Աստուած որոնողի» եւ «ամբարտաւանութեան» յատկանիշներն աւելի յարմար են Մարկիտինին քան Պղատունին: Եզնիկը նախ գովում է առհասարակ փիլիսոփաների աստուածախոյզ կամ աստուածորոնող լինելու յատկանիշը: Յիշեցնենք այս առթիւ նրա գրածը. «արտաքին» այսինքն՝ հեթանոս իմաստունների մասին ասել է. «Այնու զի արարչախնդիր եւ աստուածախոյզ եմ, եւ անկեալք ի միոյն ճշմարտէն՝ ի բազումս ոտնառեցին, եւ ոչ ուրեք եղեւ կայ եւ հաստատութիւն: Զի խնդրելմ զԱստուած, գովութեամբ արժանի էր. եւ ոչ զմին եւեթ՝ այլ բազումս մոռնանել, անհնարին ամբարշտութիւն է» (1959, էջ 89. 24-27. Վենետիկ, 1826, էջ 202): Այնուհետեւ խօսքը մասնաւորելով Յունաց իմաստունների մասին՝ գրել է. «Եւ առաւել Յունաց իմաստունն զսրովին, զի հասեալ ի վերայ իմաստութեանն՝ չժանեան իմաստութեամբն զարարին» (պարբ. 293 եւ էջ 202): Ապա յիշեցնում է, թէ ի՞նչն է գովելի ընդհանրապէս յոյն փիլիսոփաների եւ մասնաւորապէս փիլիսոփայական այս կամ այն հոսանքի ուսմունքի մէջ. «Արդ (ի) խնդրելն փիլիսոփայից զԱստուած ի բնական աւրինաց՝ որ ի միտսն տնկեալ է, որպէս յառաջագոյնն ասացաք, գովութեամբ արժանի է» (պարբ. 300 եւ էջ 208): Պիլթագորաս «զի աստուածոցն ոչ հրամայեաց զոհել, այնու գովելի է» (պարբ. 321 եւ էջ 221). «Գովելի եւ առաւել գովելի,

զի վասն կարեաց եւ ցանկութեանց յաղթելոյ՝ ի կերակրոցն կրաւնաւորեցաւ» (պարբ. 322 եւ էջ 221): Ի հարկէ Եզնիկը ցոյց է տալիս եւ խիստ քննադատում յոյն փիլիսոփաների անընդունելի դրոյթները: Սակայն Մարկիտինի մասին խօսելիս գովասանական ոչ մի խօսք չի ասում, նրա աղանդի մէջ գովելի ոչ մի բան չի գտնում եւ մատնանշում: Ընդհակառակն, նրան համարում է «վատթարագոյն քան զամենայն մարդիկ» եւ սատանայական ոգւովն յանդգնեալ. «Արդ Մարկիտինն, թէ մարդ ոք իցէ, ապա եւ նմա անճառ էին բանքն. որ եւ մարդ իսկ է, եւ վատթարագոյն քան զամենայն մարդիկ, որոյ թողեալ զճշմարտութիւն Հոգւոյն, եւ նստի առասպելս կարկատէ: Եւ այնչափ յանդգնեալ սատանայութեան ոգւովն, մինչեւ ի պատգամաց Հոգւոյն սրբոյ քաղ հանել» եւ այլն (պարբ. 363 եւ էջ 253): Ըստ մեզ՝ Պղատունը նրանից անհամեմատ բարձր է իբրեւ մարդ եւ փիլիսոփայ. Մարկիտինի աղանդի մէջ փիլիսոփայութիւն անգամ չկայ: Այս բոլորից մեզ անվիճելի է թւում, որ Եզնիկը Պղատունի մասին է ասել, եւ ոչ Մարկիտինի, «Զորոյ զկամսն սիրեմ վասն զԱստուածն ասել, եւ ոչ Մարկիտինի, «Զորոյ զկամսն սիրեմ վասն զԱստուածն»:

Մարկիտինը ճշխնդրելոյ, եւ զամբարտաւանութիւնն ոչ գովեմ»: Մարկիտինը ճշմարիտ Աստուծոն չի որոնել, այլ նրան ուրացել է, որովհետեւ Հոռմում նրան ներում չի շնորհուել, երբ նրա իսկ հայրը՝ եպիսկոպոս, նրան արտաքսել է եկեղեցուց. «Մարկիտինս այս ի Պոնտացուոց աշխարհէ անտի եղեալ էր, որդի եպիսկոպոսի: Եւ ապականեալ զկոյս մի, գնաց փախստական վասն մերժելոյ զնա յեկեղեցւոյ՝ իւրոյ իսկ հաւրն: Եւ երթեալ ի Հոռմ խնդրել ապաշխարութիւն [յայնց որ անդ էին] յայնմ ժամանակին, եւ չհասեալ այնմ՝ զրգոցեալ ընդդէմ հատոց» (Եզնիկ, պարբ. 432 եւ էջ 296): Եզնիկն ի՞նչ գովելի բան կարող էր գտնել այդպիսի մարդու մէջ, որ նրա համար «վատթարագոյն էր քան զամենայն մարդիկ», իր իսկ խօսքերով ասած:

Այս բոլորով հանդերձ, Եզնիկի մեր մէջբերած խօսքերից մի քանիսը նշելով՝ Մարիէսը գրել է. «Ուրեմն Եզնիկի համար փիլիսոփաներն ընդհանրապէս «աստուածորոնողներ» են. սակայն եթէ փիլիսոփաների եւ հեքստիկոսների մէջ կայ մէկը, որին ամէնից շատ է յարմար գալիս այդ մակդիրը, իրօք Մարկիտինն է» (1928ի աշխատ., էջ 103): Մենք համաձայն չենք, եւ նկատել տանք, որ Եզնիկը խօսում է դեռեւս հեթանոս փիլիսոփաների եւ ոչ թէ հեքստիկոսների մասին, որպիսին է Մարկիտինը. Եզնիկը սրան երբեք փիլիսոփայ կամ իմաստուն մակդիրը չի տուել, ինչպէս իրաւամբ կոչել է Պղատունին: Ըստ Մարիէսի, իբր «Մարկիտինի ամբողջ ջանքի նպատակն էր՝ գտնել, եթէ կարելի է այսպէս ասել, վսեմացնել Աստուծոյ գաղափարը: Այդ իսկ տեսակէտից էր նա իր խաբած մարդկանց երեւում Աստուծոն իբրեւ աւելի լաւ ճանաչած՝ «զի նորա առաւել գտնմի ծանուցեալ զԱստուած» (նոյն տեղում, էջ 103): Կրկին ու կրկին կարդում ենք

Եզնիկի գրածները Մարկիոնի եւ մարկիոնականների մասին եւ զարմանում Մարիէսի՝ նրա «Ջանքին» տուած բնորոշման վրայ:

Մարիէսին թւում է նաեւ, թէ ամբարտաւանութեան յատկանիշն աւելի յարմար է Մարկիոնին քան Պղատոնին, որովհետեւ Եզնիկը Պղատոնին խիստ քննադատում է, բայց ոչ հպարտութեան կամ ամբարտաւանութեան համար. ընդհակառակն, նա «յօժարեցաւ» խօսել Աստուծոյ եւ նրա արարածների մասին: Այս բոլորին պատասխանեցինք վերելում: Մարիէսը Մարկիոնի ամբարտաւանութեան գիծ է համարում նրա «սատանայական համարձակութիւնը», եւ Եզնիկից մէջ է բերում մի երկար, բայց անտեղի հատուած, ուր կարդում ենք այն տողերը, որ նշեցինք քիչ առաջ՝ Մարկիոնին իբրեւ մարդ «վատքարագոյն քան գամեմայն մարդիկ» եւ «... այնչափ յանդգնեալ սատանայութեան ռգումն...» (1928, էջ 105): Կարծում ենք, որ սրանք Մարկիոնի այնպիսի յատկանիշներ չեն, որպէսզի Եզնիկը նրա մասին գրէր. «Զորոյ զկամսն սիրեմ վասն զԱստուածն խնդրելոյ, եւ զամբարտաւանութիւնն ոչ գովեմ»: Ընդհակառակն:

Վերջացնում ենք յարգելի եւ լուրջ հայադէտ Ե. Տէր-Մինասեանի հետեւեալ կարծիքով, որուն համամիտ ենք. «Այս մասում, ինչպէս երեւում է Եզնիկի խօսքերից, նա գրել է կամ մտադրութիւն է ունեցել գրելու, յատկապէս նաեւ, Պղատոնի դէմ — «Եւ արդ ընդ նմա (ընդ Պղատոնի) իսկ մարտիցուք գոռութեան բանիւք», բայց այժմեան Եզնիկում այդ հատուածը բացակայում է, այսինքն՝ հերքումն սկզբում է, բայց մի երկու նախադասութիւնից յետոյ կտրւում է»¹⁶:

Երուսաղէմ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

9

16. Ե. Տէր-ՄինԱՍԵԱՆ, Պատմաբանասիրական հետազոտութիւններ, Երեւան, 1971, էջ 300-301:

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Եկեղեցական ուսումներու մարդին մէջ վերջին երեսնամեակը յատկապէս բեղուն շրջան մը հանդիսացաւ: Մանաւանդ սուրբգորական, ծիսական, եկեղեցապատմական եւ հայրախօսական ուսումները նշեցին հսկայաքայլ յառաջդիմութիւններ, որոնց հիմերը զետեղուած էին արդէն երկու աշխարհամարտերու միջանկեալ տարիներուն: Կարելի է անվարան հաստատել թէ Ի. դարուն՝ եկեղեցական ուսումները ապրեցան վերադարձումի եւ յեղաշրջումի շրջան մը, որ անկիւնադարձային հանգամանք մը կը կրէ: Այս յեղաշրջումը արդիւնքն էր զլիաւորապէս զիտական նոր մտայնութեան մը երեւումին՝ իրեն յարակից նորութիւններով մեթոտի եւ նիւթի մերձեցումի, ինչպէս եղած էր Վերածնունդի շրջանին բնական գիտութիւններու համար: Եկեղեցական ուսումներու մէջ յայտնուող նոր մտայնութիւնը վարակուած էր քննական այն նոր ըմբռնումներէն՝ որոնք ԺԹ. դարուն յեղաշրջած էին պատմական ուսումները եւ որ հետզհետէ կը ծաւալէին իրենց ազդեցութիւնը պատմաբանասիրական ուսումներու այլեւայլ ճիւղերուն:

Քննական մտայնութեան բերած մեթոտի եւ մերձեցումի հիմնական նորութիւնները կարելի է խտացնել մեծագոյն առարկայակցութեան մը եւ հեղինակի մտքին աւելի համապատասխան թափանցումի մը աւելի զիտակցօրէն զգացուած եւ դրականօրէն ըմբռնուած պահանջին մէջ: Ասիկա կը նշանակէր տակաւ ձերբազատում մը դաւանական (dogmatique) մտայնութենէն եւ ասոր ներփակած ի յառաջագունեան ընթացակերպէն, որոնք կը տիրապետէին յատկապէս դաւանաբանական աղբիւրներու, ինչպէս են Ս. Գիրքը եւ Ս. Հայրերը, մեկնաբանութեան մէջ: Նկատառումը՝ հեղինակներու ապրած դարաշրջաններուն ընկերային ու տնտեսական պայմաններուն, դա-